ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՎԻՈԼԱ ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/68 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Гемос-ПФ	НПП «БИОТЕХ-М»	Պլազմաֆերեզի շարժական սարք, բազմաֆունկցիոնալ, հետևյալ բժշկական միջամտությունների իրականացման համար՝ պլազմաֆերեզ, հեմոսորբցիա, պլազմասորբցիա: Սարքը շարժական է և հեշտ տեղափոխվող: Սարքը լրացուցիչ հնարավորություն ունի համալրվելու ներկառուցված լազերային (LOK) և/կամ ուլտրամանուշակագույն (UFOK) արյան ճառագայթիչներով, որոնք կառավարվում են սարքի պրոցեսորով: Պլազմաֆերեզի ժամանակ սարքի արտամարմնային (էքստրակորպորալ) շղթայի ծավալը՝ 50 մլ-ից ոչ ավել: Երակից վերցվող արյան ծավալը ընտրելու հնարավորություն (պոմպի հարվածային թողունակությունը)՝ երկու ռեժիմ՝ 5 կամ 10 մլ ծավալով: Ցանկացած կենտրոնական կամ ծայրամասային (ներառյալ նեղ) երակների և ծայրահեղ ցածր արյան շրջանառության դեպքում աշխատելու հնարավորություն՝ սկսած 2 մլ/րոպեում: Արյան պերֆուզիայի հնարավոր արագությունը մինչև 150 մլ/րոպեում: Պլազմայի անջատման հնարավոր արտադրողականությունը (արագությունը) մինչև 25 մլ/րոպեում: Հակամակարդիչ լուծույթի դոզավորման հնարավորություն՝ կաթիլային և

			ծավալային: Հիվանդների անվտանգության ապահովման մշակված համակարգի առկայություն հետևյալ պարտադիր բաղադրիչների առկայություն. - չափազանց փոքր ծակոտիներով միկրոֆիլտրերի օգտագործում. հակաբակտերիալ օդի ֆիլտր (1-1,2 մկմ), արյան միկրոագրեգատների փոխներարկման ֆիլտր (180-200 մկմ); - արյան հավաքման և վերադարձի տևողության սենսորներ; - վակուումի և ճնշման սենսորներ՝ արյան արտանետման և վերաինֆուզիոն գծերի վրա; - 4 օդային սենսորներ (տվիչներ)՝ հակամակարդիչ և ինֆուզիոն գծերի վրա; - ձայնային, լուսային ազդանշաններ և արգելափակում արտակարգ իրավիճակներում, անվտանգության փականի և հակաշրջանառության փականի առկայություն: Էլեկտրասնուցումը՝ 220 Վ, 50 Հց փոփոխական հոսանքի աղբյուրից: Տեղադրում և մեկնարկ: Աշխատակազմի ուսուցում տեղում: Օգտագործման ձեռնարկ ռուսերեն: Սարքավորումը նոր է, չօգտագործված: Լրակազմը ներառում է բոլոր անհրաժեշտ լրացուցիչ սարքերը և պարագաները, որոնք անհրաժեշտ են լիարժեք գործունեության համար: Երաշխիքային ժամկետ՝ 36 ամիս: Սարքը մատակարարվում է պայուսակի (դիպլոմատ) տիպի փաթեթով՝ հեշտ տեղափոխման համար: Սարքը ունի արտադրողի ISO-13485 հավաստագիր: Սարքը ունի սարքի գրանցման հավաստագիր արտադրման երկրում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО «ВИОЛА» в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/68 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
1			